ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am

Ե/2015- 13.01/07
13.01.2015 թ.

ՀՀ ոստիկանության Էրեբունու բաժնի
պետ Գ. Հակոբյանին

Հարգելի պարոն Հակոբյան,

2014թ. հոկտեմբերի 2-ին կազմակերպության կողմից հանցագործության մասին հաղորդում է ներկայացվել ՀՀ գլխավոր դատախազություն Լոռու մարզի Դսեղ գյուղի բնակիչ Էրիկ Էքսուզյանին ոչ ճիշտ բժշկական օգնություն ցուցաբերելու համար մեղավորներին բացահայտելու և պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

Ներկայացված հանցագործության մասին հաղորդումը ՀՀ գլխավոր դատախազությունից մակագրվել է Երևան քաղաքի դատախազություն այնուհետև Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազություն, որտեղից էլ վերահասցեգրվել է ոստիկանության Էրեբունու բաժին:

Ներկայացված հանցագործության մասին հաղորդման վերաբերյալ մինչ օրս Կազմակերպությունը ՀՀ ոստիկանության Էրեբունու բաժնի կողմից որոշում չի ստացել:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանցագործությունների մասին հաղորդումները պետք է քննարկվեն և լուծվեն անհապաղ, իսկ գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելն ստուգելու անհրաժեշտության դեպքում՝ դրանց ստացման պահից 10 օրվա ընթացքում:

Նույն օրենսգրքի 181-րդ հոդվածի համաձայն՝ հանցագործության մասին տեղեկություն ստանալու յուրաքանչյուր դեպքում ընդունվում է հետևյալ որոշումներից մեկը՝ քրեական գործ հարուցելու մասին, քրեական գործ հարուցելը մերժելու մասին, հաղորդումն ըստ ենթակայության հանձնելու մասին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործ հարուցելու առիթի և հիմքերի առկայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը որոշում են կայացնում քրեական գործ հարուցելու մասին: Սույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ քրեական գործ հարուցելու մասին որոշման պատճենն ուղարկվում է հանցագործության <u>մասին հաղորդած ֆիզիկական կամ իրավաբանական անձին</u>:

Քրեական դատավարության օրենսգիրքը կարգավորում է նաև հանցագործության մասին հաղորդումների վերաբերյալ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումների տրամադրումը, հանցագործության մասին հաղորդում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձանց (տես՝ քր. դատ. օր. 185-րդ հոդվածի 1-ին մասը):

Ըստ վկայակոչված իրավանորմերի կարելի է պնդել, որ ՀՀ ոստիկանության Երեբունու բաժինը, Կազմակերպության կողմից ներկայացված 2014թ. հոկտեմբերի 2-ի հանցագործության մասին հաղորդման վերաբերյալ կայացված քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումները (եթե այդպիսին կան) պարտավոր էր 10 օրյա ժամկետում տրամադրել հանցագործության մասին հաղորդում ներկայացրած իրավաբանական անձին:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ, 182-րդ և 185-րդ հոդվածները խնդրում եմ տրամադրել 2014թ. հոկտեմբերի 2-ին ներկայացված հանցագործության մասին հաղորդման հիման վրա կայացված որոշումները:

Կից ներկայացնում եմ.

1. 2014թ. հոկտեմբերի 2-ի հանցագործության մասին հաղորդման պատճենը,
2. ՀՀ գլխավոր դատախազի թիվ 15/15/1667-14 գրության պատճենը,
3. ՀՀ Երևան քաղաքի դատախազության 50/976դ-14 գրության պատճենը,
4. Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազության 20.10.2014թ. գրության պատճենը,
5. ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Շենգավիթի բաժնի 27.10.2014թ. գրության պատճենը:

Հարգանքով
կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատարող՝ Ա. Զալյան
azalyan@hcav.am

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am

Ե/2014- 02.10/392
02.10.2014 թ.

ՀՀ գլխավոր դատախազ
Գ. Կոստանյանին

Հարգելի պարոն Կոստանյան,

2014թ. սեպտեմբերի 28-ին իր որդու՝ Էրիկ Էքսուզյանի իրավունքների պաշտպանության հարցով Կազմակերպություն[1] է դիմել Լոռու մարզի Դսեղ գյուղի 6/36 հասցեի բնակչուհի Ինգա Վահանի Կիրակոսյանը:

Կազմակերպությանն ուղղված դիմումով Ի. Կիրակոսյանը հայտնել է, որ 2004թ. մայիսի 26-ից որդու՝ Էրիկ Արթուրի Էքսուզյանը կրծքավանդակի շրջանում նկատվել է գոյացություն, որի վտանգավորությունը պարզելու համար Ի. Կիրակոսյանը որդուն տեղական պոլիկլինիկաներում հետազոտությունների է տարել, սակայն այնտեղ հայտնել են, որ կարիք չկա անհանգստանալու, որևիցե լուրջ խնդիր չկա, և նա միջոցներ չի ձեռնարկել:

2005թ. դեկտեմբերին որդու վատ զգալու պատճառով նրան տեղափոխել է Երևան Սուրբ Աստվածամայր բժշկական կենտրոն, որտեղ հայտնել են, որ ողնաշարի վիրահատության անհրաժեշտություն կա:

2005թ. դեկտեմբերի 9-ին Սուրբ Աստվածամայր բժշկական կենտրոնում վիրաբույժ Ռոբերտ Իվանիչի և նեյրոխիրուրգ Մակար Մարտիրոսյանի կողմից կատարվել է Է. Էքսուզյանի ողնաշարի կրծքային հատվածի վիրահատություն:

2008թ. երեխան սկսել է քայլել, սակայն վերջինիս մոտ նկատվել է ողնաշարի թեքություն:

2010թ. Ի. Կիրակոսյանը որդուն տարել է Սուրբ Աստվածամայր բժշկական կենտրոն, որտեղ կատարված հետազոտման արդյունքում պարզ է դարձել, որ Էրիկ Էքսուզյանի մոտ առկա է կիֆոզ հիվանդությունը և անհրաժեշտ է եղել անհապաղ վիրահատություն:

Կազմակերպությանն ուղղված դիմումում քաղաքացին հայտնել է, որ Սուրբ Աստվածամայր բժշկական կենտրոնի բժիշկ Կարապետ Մոմջյանը, ստանալով երեխայի մոր

[1] Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ

համաձայնությունը, իրականացրել է վիրահատություն, հույս հայտնելով, որ վիրահատությունից հետո, երեխան կսկսի նորմալ քայլել:

2011թ. Էրիկ Էքսուզյանը սկսել է քայլել սայլակով, սակայն որոշակի բողոքներ է ունեցել մեջքի շրջանում:

Ի. Կիրակոսյանը կրկին անգամ որդուն տարել է վիրահատությունը կատարած բժշկի մոտ, ով զննություն կատարելու արդյունքում հայտնել է, որ անհրաժեշտ է կրկին վիրահատություն և պետք է ողից ոսկորի մի մաս վերցնի, որպեսզի ամրացնի ողնաշարը, որ նորից կիֆոզը չկրկնվի:

Ըստ Ի. Կիրակոսյանի կազմակերպությանն ուղղված դիմումի՝ կատարված վիրահատության արդյունքում Էրիկ Էքսուզյանը մինչ օրս ընդհանրապես չի քայլում, նրա վիճակը ծայրահեղ ծանր է:

2013թ. վերջինս որդուն կրկին անգամ տարել է նույն բժշկի մոտ, որն ել հայտնել է, որ անհրաժեշտ է կրկին վիրահատություն անհրաժշեշտ է ողնաշարին կոնստրուկցիա հավաքել, որը արժե 6000 ԱՄՆ դոլար:

Կատարված վիրահատության արդյունքում Է. Էքսուզյանի առողջական վիճակը չի վերականգնվել, ավելին՝ օր օրի նրա առողճական վիճակը էլ ավելի է վատանում:

Ըստ Ի. Կիրակոսյանի Է. Էքսուզյանի ներկայիս առողճական վիճակի միակ պատճառը ոչ ճիշտ բժշկական միջամտություն է, որը կատարել է Սուրբ Աստվածամայր բժշկական կենտրոնի բժիշկ Կարապետ Մոմջյանը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Ձեր լիազորությունները դիմում եմ Ձեզ համապատասխան միջոցներ ձեռնարկել Էրիկ Էքսուզյանի խախտված իրավունքները վերականգնելու, սույն գործով մեղավորներին բացահայտելու և համապատասխան պատասխանատվության ենթարկելու համար:

Հարգանքով
կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատարող՝ Ա. Զալյան
azalyan@hcav.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

ք.Երևան, Հանրապետության 85, հեռ.580417

N 50/9762-14

«17» 10, 2014թ.

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական
շրջանի դատախազ, արդարադատության
առաջին դասի խորհրդական

Ա.Դ.Չիչոյանին

պատճենը՝ Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի
Վանաձորի գրասենյակ՝ կազմակերպության նախագահ
Ա.Սաքունցին

(ք.Վանաձոր, Տիգրան Մեծի պողոտա 59)

Հարգելի՛ պարոն Չիչոյան,

Ուղարկում եմ ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակից ստացված գրությունը՝ Լոռու մարզի Դսեղ գյուղի բնակիչ Էրիկ Էքսուզյանին ոչ ճիշտ բժշկական օգնություն ցուցաբերելու համար մեղավորներին բացահայտելու և պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

Անհրաժեշտ է հանձնարարել անհապաղ ստուգել գրությամբ հիշատակված հանգամանքները և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ և 181-րդ հոդվածներով սահմանված կարգով լուծել ընթացքը:

Արդյունքների մասին հայտնել հեղինակին և Երևան քաղաքի դատախազությանը:

Առդիր՝ գրությունը՝ « 2 » թերթ:

Հարգանքով,

Երևան քաղաքի դատախազի տեղակալ,
արդարադատության առաջին դասի
խորհրդական՝ *Լ.Ս.Գրիգորյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

0010 ք. Երևան, Վ.Սարգսյան փ. 5

Էլ. փոստ info@prosecutor.am

15/15/1667-14

2014-10-08

Երևան քաղաքի դատախազ

պարոն **Ա.Դավթյանին**

պատճենը՝ Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի

Վանաձորի գրասենյակ՝

կազմակերպության նախագահ Ա.Սաքունցին

/ք.Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59 /

Հարգելի պարոն Դավթյան՝

Ձեր քննարկմանն եմ ուղարկում ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակից ստացված գրությունը՝ Լոռու մարզի, Դսեղ գյուղի բնակչուհի Ինգա Կիրակոսյանի որդուն՝ Էրիկ Էքսուզյանին ոչ ճիշտ բժշկական օգնություն ցուցաբերելու համար մեղավորներին բացահայտելու և պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

Առդիր՝ 2 թերթ:

Հարգանքով՝

Հետաքննության և նախաքննության
օրինականության նկատմամբ
հսկողության վարչության պետ՝ **Լ.Հարությունյան**

կատ.Կ.Ստեփանյան
հեռ.511-520

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՇԵՆԳԱՎԻԹ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

0026, ք. Երևան, Գ. Նժդեհի 27, հեռ. 44-19-63, ֆաքս 44-47-02

N 57/2237-14

«20» 20 2014թ.

ՀՀ ոստիկանության Շենգավիթի բաժնի պետ,
ոստիկանության գնդապետ
Ա.Հովհաննիսյանին

պատճենը՝ *Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի*
Վանաձորի գրասենյակ՝ կազմակերպության
*նախագահ **Ա.Սաքունցին***
/ք.Վանաձոր Տ.Մեծի պողոտա 59/

Ուղարկում եմ ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված՝ Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի նախագահի գրությունը՝ Լոռու մարզի Դսեղ գյուղի բնակիչ Էրիկ Էքսուզյանին ոչ ճիշտ բժշկական օգնություն ցուցաբերելու համար մեղավորներին բացահայտելու և պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

Անհրաժեշտ է հանձնարարել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածների կարգով նախապատրաստել նյութեր և լուծել ընթացքը:

Արդյունքների մասին հայտնել հեղինակին և Շենգավիթ վարչական շրջանի դատախազությանը:

***<u>Առդիր</u>** գրությունը՝ 2 թերթ:*

Վարչական շրջանի դատախազ,
արդարադատության առաջին դասի
խորհրդական ***Ա.Չիչոյան***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՇԵՆԳԱՎԻԹԻ ԲԱԺԻՆ

«27» 10 2014թ

28/3-9629

375026 Գ.Նժդեհ փող. 27
հեռ. 44-02-02, 48-02-02
ֆաքս42-02-02

«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեային»
/Լոռու մարզ, ք.Վանաձոր,Տ.Մեծի պող.59/

Հայտնվում է, որ Ձեր դիմումի հիման վրա նախապատրաստված նյութերը տարածքային ենթակայության կարգով ուղարկվել են ոստիկանության երեքունու բաժին:

Բաժնի պետի՝ Ա.Կ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

կատ՝ Ն.Ավետիսյան